

կան սկզբունքն անոր գործնական դիրու-
թիւնն է: ժամանակին համեմատ Աստուած
իր լեզուն և գիրն փոխեր է, իր ազդե-
ցութիւնն և շունչը յայտնելու համար:
Ինչո՞ւ մենք պիտի կապուինք մէկ գրու-
թեան ձևի հետ՝ երբ նա ամենեւին Աս-
տուծոյ հետ կապակցութիւն չունի: Աս-
տուածայայտնութիւնը և մարգարէութիւնը
երբեմն երբայական լեզուով և գրով էր,
յետոյ արարերէն և քուֆի տառերով ե-
ղաւ, այժմ սօրս, նստիս և նստրայից գրե-
լով կը գրենք: Ինչո՞ւ պիտի այսուհետև
աւելի դիրին տառերով չգրենք: Մեր ար-
գիտութիւնն ծածկելու և յառաջադիմու-
թիւնը մերժելու համար մենք պատրուակ
մը հնարեր ենք: Ամեն գործ և ամեն գո-

հողութիւն որ չենք կրնար յանձն առնուլ,
կ'ըսենք՝ մեր կրօնքի դէմ է, (բ) միմի
գլուխի ձևը կամ (յ) նունի շրջանակը
ի՞նչ առնչութիւն ունի շէրիյաթի հետ:
Պարսկաստանի ամեն գիւղ գրագիր մը կը
գտնենք՝ որ իր հաճոյքին համեմատ մեր
գրութեան ձևերը կը փոխէ: Դիտեցէ՛ք՝ որ
այս վերջերս մեր ապագրութիւնը տառե-
րու ձևերը որքան փոփոխեց, հարիւր ձև
(յ) վավ և (օ) հէ ունինք՝ որ իրարու
նման չեն: Իթէ փոխանակ այս բոլոր ըստ
քան փոփոխմանց, կանոնաւոր բարեփո-
խում մը շինենք, ո՞ր մարգարէն և ո՞ր է-
մամն մեզմէ պիտի դժգոհ թնայ:

ՏԻՐԻՔ. ՊԱՅՆԻ.

Շարայարեյի



ՆՈՐ ԵՐԳԵՐ

ՎԻԿՏՈՐԻԱ ԱՂԱՆՈՒՐԻ



ՈՒՃ

Կ'երթային: Դեպ էր ճանապարհն ու ժայռուտ:
Նէ իր ընկերը քնքշօրէն կը դռուէր
Գըգուանքներու և ժըպիտի: Խուսափուկ
Սակայն ժըպիտ մը, խուսափուկ գըգուանքներ
Ան կը շնորհէր խարտիշագեղ այն կոյսին:
Բիբերը պի՛շ դէպ ի կատարը, ծարաւ
Բարձրութեանց, հո՛ր ու բոց կամօղ մը կ'ելլէր:
Կատարն հեռու էր, բայց աղջնակը արի
Ջըւարթ երգեր կ'երգէր, որ զայն յորդորէ,
Սիրտ տայ անոր, եւ կը կըրկնէր արձագանգն
Երգն ու գեղգեղն իր ժըպիտին: Նէ կարծես
Հեռք անգամ չէր թողուր, այնքան թեթեւ, ժիր
Կ'ելլէր դարմերն ի վեր, մագիլը չըքնաղ
Հովին, զգեստները ծըփծըփուտ, եւ զըւարթ
Ու թարմ ինչպէս ապրիլն: Անա նըպատակն
Իր մօտ տեսաւ այն ուղեւորն, եւ բըռնած
Գագաթն, հասաւ հոն ուր ծաղկեայ կամարի

Տակ կը սպասէր իրնն ամբոխն անհամբեր.
Եւ ունկընդդեց ոպսաննաներն ու սեղմեց
Գըրկեց շքեղ բարունակն: Հո՛ւսկ ուրեմն, հո՛ւսկ,
Ո՞չ լի սրարբուս յաղթանակին ներս հետ,
Արի շքեղաղ ընկերուհոյն: «Ո՛ւր է, ո՛ւր,
Ո՛ւր է գացեր, ո՛ւր, երբ հիմա քովս էր նէ»:
Ան կ'երկարէ իր բագուկներն՝ երագկոտ,
Նըման կոյրին՝ որ յանկարծ գուրկ կը մընայ
Առաջնորդող ձեռքէն: Ինչո՞ւ կը մըթնէ
Երկինքն, ինչո՞ւ երգերն հիմա կը հընչեն
Հեզօրէն. ո՞հ, փայլակը մէկ, մէկ փայլակն
Այն աշքերուն. խաղիկ մ', ակնարկ մ', արձաւ.

(գանգ մ')

Իր ժըպիտին. տեսնէի զայն անգամ մ' ալ,
Վերջին անգամ մ' ալ լըտէի հրաւերն, ո՞հ,
Գըգուանքներու և խօշական խաղերու,
Եւ մէկ ժամու մոռացօնքին. տեսնէի
Հովին ձըգուած այն իր ծամերը, դարձաւ
Լըտէի ձայնն՝ որ կը յօդէր հրաշալի

խօսքերն Բակայն ընկերուհին՝ մընացած
 Որ մը թողլիք՝ հեռու է արգ: Կը թեւեւ
 Աղաղակներ ուրախ մարգէն դէպ ի վեր.
 Պատանիներ, օրիորդներ կը պարեն,
 Կ'երգեն: Արդ նէ ուրիշներու կը շնորհէ
 Ոգեւորիչ իր ձայնն ու իր կենսատու
 Աշուշներուն փայլակուծներն: Ահա նէ
 Դայարագեղ գոտիվերին վրայ կանգուն,
 Անգիտակից գեղեցկութիւն, կը վերցնէ
 Թեւերն իր մերկ՝ գերդ խանակիր մ'արգոսեան
 Եւ վարդերով կը պըստակէ իր ճակատն:
 Կը հընէ շուրջը կեցցէն: «Ո՛վ առողջ կեանք,
 Երկուստարդ առուգութիւն» Կը կանչէ
 Այսպէս զանի անյուսօրէն, եւ ձեռուին
 Կը կարկանէ անոր՝ այլ եւսը ի գուր,
 Ան երբեմնի սիրողը: Նէ չի լըսեր,
 Այլ եւսը չի լըսեր, եւ փոյթ ալ չ'ընէր,
 Եւ պարաւոր նըւագներով կ'երթայ նէ
 Եւ ծաղկաթիթիթ դրախտներու մէջ կ'անհետի:

Մ Ե Ր Ե Ր Ք Ի Ո Ն Ա Ջ Ա Ի

(ՆԱՐ 3. ՄԵՆԳԵՍՈՒԻ)

(Հէկնէ բրջօ)

Կամարներուն անշարժուն
 Թերաստուերին մէջ՝ հըսկող
 Դամբաններուն վրայ ձայն մ'է
 Կը բարձրանայ, որ կ'արթընցնէ անսովոր
 Արձազանգներ՝ նըւիրական յարկին մէջ:
 Նընջեցեալները կ'ելլեն
 Տարօրինակ հանգէտին.
 Ժամը դատարկ է, ազատ,
 Եւ երգիտը կ'երգէ:

Երգիտնին առջևը ծեր մ'է նըստեր.
 Ան կը զարնէ, կը խոկայ
 Գարուն իրկուն մը, դէմք մը կոյս, խօսք մը մեծ,
 Որ գիշերին մեղմիկ սիւքին մէջ անցաւ
 Եւ զոր հոգին լըսեց լոկ:
 Ո՛վ ապրիլ, ո՛վ բարբախտներն առաջին,
 Ո՛վ գեղեցիկ սըրբաբանք:

Պատուհաններն այն խաղերէն կը բացուին
 Ու կը մըսենէ ծովուն շունչն,
 Յորդ գեղումն հոն կը մըսենէ
 Մաղկազըւարճ անտառին
 Հանդիպակաց լեռնակէն:
 Առուգութիւնը կը մըսենէ: Կը մըսենէ
 Կեանքը, եւ աստղ մը ճակտին
 Կը ճաճանչէ վերջալոյսն:

Քաշքըչելով պատանքնին
 Կ'ելլեն զինով կըմախքներն,
 Եւ անձուկովը հրապուրիչ այն ձայնին
 Կը դանգաչեն՝ մարդկային
 Եւանդներով ըզզըլիած:
 Կ'անցնին աստղերը, եւ բարձր
 Աղեղներէն կը դիտեն խիստ շատայով
 Թաղմանական այն ըսպիտակ կըմախքներն:

Ի Ձ Ի Մ Ա Բ Ո Ջ Ա

Խաղաղ, անդորր այս լըծին
 Աշըջեւ, հոս այս ափին վրայ,
 Հեռու այսպէս աշխարհային պայքարէ
 Եւ հակամէտ երազի
 Զոր կը շընչէ քաղցրիկ երկիրը հապեայց,
 Հոս ուր սարեակը կը սուլէ, կ'ոստոստէ
 Մըլըրիւն, եւ շինջ ուրախութիւն մ'ամէն բան
 Կը լեցընէ. նըստած հոս
 Կաղնիներուն տակ շըքըլ,
 Ու ծըծելով խոտերուն
 Ողջ հոտը, ո՛վ Չիմարոզա, կը խոկամ
 Քու մեծութիւնըդ պարգուկ:

Ք Թ Ի Ի Թ Ի Ի Ն

Դաշտերուն մէջէ
 Ծովերուն վրայէն
 Կ'անցնի թիւ մը մեծ,
 Մեծ ձայն մը կ'անցնի:
 Թեւն իր անցնելուն
 Ստուերը կը ցըրուէ,
 Վեր կը կանչէ ձայնն:
 Կը կանչէ զըւարթ
 Միջօրէններու,
 Հանդարտ ու անուշ
 Իրիկուններու.
 Վարդ առողջութեան՝
 Տկարներն, հիւանդներն
 Ու ծերունիներն:
 Կը կանչէ թողլիթ
 Գործերու, մարտի
 Փայլակուծներու՝
 Պըզերգներն, եւ իր
 Երազով բեղուն
 Ժողովուրդին, իր
 Ժողովուրդին՝ հեղզ
 Չանձուրութիւններու
 Լըքուած մատնետուր՝
 Կը կանչէ քերթողն:

ԵՐ Բ

կը խօսի գիրքն իստուշխարհի արուեստի,
 Դպրոցներու, սխուրճներու, նախատպի,
 Դաւանանքի վրայ, Մտածումն
 Որքան յոգնած է, գոցեմք գիրքը. երկինքն
 Սրտան վերջին ճաճանչով վարկ կը վառի,
 Եւ մայիսի իրիկուան
 Յանկարծ կ'անցնի ծիծառներու ճրտուղիւնն:

Օ՛ն, թող բացուին պատուհանները բուրբ,
 Օգը մըտնէ՛, հոտեան
 Օղն որ ծովուն թընդինը մեզ կը դրկէ:
 Այլ եւրս չի դանար այս ժամը լոյսի:
 Ո՛վ սուրբ, հըզօր, միակ զբաղոց դու բնութիւն,
 Մարդերու ո՛ր, ո՛ր խօսքերն
 Ունին երբեք հրմայքը քու մէկ խօսքիդ:

Պէնցած՝ մրտած էջերու վրայ՝ ո՛վ ի գուր
 Եւ տանջանքով ապրւած
 Երկայն ժամեր, միւրք՝ բոց, գարկը՝ արագ,
 Կուրծքը թասուն. ո՛վ առոյգ
 Աբրտէ փըրթած դուք երգի,
 Ե՛րբ պիտի դուք հաւատարիք իրիկուան,
 Արշալոյսին, ծովու հոտին, ծաղկին:

Ղ Ո Ի Ի Զ Ի Բ Ա Ս Պ Գ Ի Ռ Յ Ի

ԿԻՍՄԱՐՁԱՆԻՆ

(ԳՐԻՄ ՈՒՐՊԱՆՈՅ ՆՈՆՈՅ ՔԱՆԴԱԿՈՐՄԻՆ)

Քիչ մը կաւ, քիչ մ'աղբիւրի ջուր, ու կ'ելէ
 Գրիչը ճամբայ. Հրաշագործակ ի՛նչ արուեստ
 Կու տայ տիղմին իրականին բարբախտին
 Ու կը գրողմէ տարիներու, վըշտի կնիքն:

Ասի կամ է, եւ շունչ մը նուրբ ու թեթեւ
 Կը շարժընէ՛ խօսքի պատրաստ շըրթուցներն.
 Կամ է, եւ ես կը գուշակե՛մ լայն ճակտին
 Տակ գործըւած մըտածումի հրաշալիքն:

Ո՛վ անձրն մեծ, որ ծաղկաւէտ դուն մայիսն
 Հայրենիքին տըւիր, հեզ սիրտ, վատերուն՝
 Աարսափելի, մահուան դէմ՝ պինդ, անվեհեր.

Կը տեսնեմ հոս ճաճանչը ձեր աչքերուն,
 Սուրբ զայրութիւններն, երիտասարդ խանդն, աշ-
 Եւ հերոսին համեստ հոգին քաշարի: (խոյժն,

ԿՈՍՄՈՒՆԻՅԻ Պ. Տ. Ս. Ի Ե Ե Ե
 Ե Ե Ե ՅՈՒՆԵՍԿՅԵՐԻՆ ԶԱՄՈՐ

Քեզ համար, ո՛վ ազնիւ, որ այս էջին վրայ
 Պիտի ծըռես անուշ աչքերըդ խոհուն,
 Պիտ՝ ուզէի անտարաններ նըկարել
 Հեզանագիկ զեղեցկութեան. կըզգիներ

Անդորրաւէտ եւ հովանուտ, ու՛շ մեղոյշ
 Երեկոյին, վերջին լուսով մ՛ հազիւ վառ.
 Քնէւած լիճեր, որոնց վրայն յամբօրէն
 Կ'անցնին կարագը ու գոյոցներու թըռիչներն.

Երագ ու ժանտ կեանքն անուշոզ ամէն ինչ,
 Որ խօսքերով՝ որոնք ծանօթ չեն մարդոց,
 Բայց գոր հոգին մըտիկ կ'ընէ ուշադիր,
 Հաւաքումի կը հրաւիրէ հոգիներն:

Հովիտներն այսպէս կը խօսին, ուր պտերին
 Ու ծոթիւրին մէջ կը ցայտէ ջինջ աղբիւրն.
 Այսպէս ուղին, որ կը մազլէ գիւղէն վեր
 Գէպ ի մարգերը լեռնային ւամայի.

Այսպէս քաղցրիկ իրիկուններն: Աւասիկ
 Կը տեսնէ՛ք, լուս մունջ կը թըմբի երկիրն ալ,
 Եւ թափանցիկ երկընթին վրայ վերն յանկարծ
 Կը սաւառնի իր կոր թեւոյն արծաթէ

Նոր լուսընկան: Կը ժըպտին այն նըշոյլին
 Կրով, նուակայք եւ անպատն, աւերակն.
 Ահա լուսթիւնն. ահա հասաւ հոգիին
 Երազներու եւ թոհչներու օրհնեալ ժամն:

Գիշերն իրն է. զայն կը հարցնէ խօսքերով
 Որ գրբուած չեն բնաւ, եւ ունին հարիւր ձայն
 Իրեն համար, որ կ'ունկընդրէ ամէն ինչ
 Ըզմայլմամբ՝ մութն, աստղերը, հովն ու խրւ-
 (հուրդն:

Ճ Ա Շ Ի Ե

Մազերն արձակ, քըճքընուած
 Դալի մը մէջ փաթթըւած՝ հոն կը սպասէ:
 Մինչ ղեզ ծախողը կը խառնէ զառնահոտ
 Հեղուկին մէջ խորհրդագուր փոշիներ:
 Չըւառուհին հոն հասած
 Յուսակորոյս՝ սենեակէ՛ն
 Ուր կը մեռնի իր մէկ հատիկ աղընական.

Հոն հասած իր ցաւերուն
 Անդունդներէն, դեռ կը սպասէ կը սպասէ
 Գեղին՝ որ է այլ եւրս իր միակ յոյսն:
 Եւ դարակի մը բարձրէն՝
 Անօթնհրու եւ շիջբու մէջերէն
 կը ծիծաղի անուն մ'ոսկի տառերով
 Եւ կարծես այսպէս կ'ըսէ.
 «Կու տամ հանգիստ, մոռացում,
 Զիս առ, զիս առ, ոչ թէ այն
 Խաբեպատիր խառնուրդը. ես, ես միայն
 Քիչ յիթերու մէջ կը փակեմ զօրութիւնն՝
 Որ ամէն խոնջ բիբերու քուն կը շնորհէ,
 Հանգիստ՝ ամէն սրբտեղու»:

ՎԵՐԱԵՆՈՒՆՆԵՐ

Ալ մէկ բանի չի յուսար նէ. արժօոյն է,
 Խօթ է ու խոնջ: Քանի՞ վայրկեան ունեցաւ
 Ուրախութեան. և ունեցաւ բնաւ. գուցէ
 Մտն է իր օրն ալ վախճանին: Բայց կ'անցնի
 Ապրիլի օդն յանկարծ. կ'ըսէ թէ «Կը զգաս»:

Յիշատակներ: Բայց ճըշմարիտ էր հանդէսն
 Իրիտասարդ հասակին, թէ՛ սըտախօս
 Դիւթանք, խօլանք մըն էր, ու բան չի մընար,
 Զի մընար բան մը գուարթագոզ ու սիրուն:
 Ժրպատուն կապոյտը կը հըծծէ թէ «Նայէ»:

Սըրբարբուսներ երգի, ազատ թըռչանքներ
 Մենք ալ, մենք ալ վայելեցիրք օր մ', էինք
 Տէր աշխարհի, զեղեցիկութիւնը միայն
 Մեզ համար էր, բայց որ ատենն էր արդեօք:
 Եւ ծիծեռնակ մը կը հըծծէ թէ «Գարնան»:
 Թարգմ. Հ. Ա. ՂԱԲԻՆԱՆ



ՎԵՐԱԵՆՈՒՆՆԵՐ

Ա.

Երգում է ահա արևը պայծառ,
 Համբոյր է տալիս ծաղիկած սարերին,
 Ուրտեղ աղջիկներ, կոյսեր սիրավառ
 Երգում են երգերն իրանց էարերին՝
 Համբոյր է տալիս կանաչ մարգերին՝
 Ուրտեղ հովիւներ սըրբիկի սոյլով
 Երգեր են ցանում մեղմիկ, սիրագին՝
 Զեփիւռի բոյրոտ ծոցումը վըրդով:

Ահա գառնուկներ անոյշ մայիւնով,
 Ահա բոժոժներ գանգիւնով հեշտին,
 Ահա ջրերը իրանց նանիով
 Լեցնում են ծաղիկոտ ծոցը սարերին:
 Յածիկ ծրխաններ էլ շունչ են հանում.
 Ահա մըշակներ զընում են դաշտեր,
 Երգելով երգեր այնպէս զըւարթուն,
 Գութանի երգեր, հողի օրօրներ:
 Այն ո՞վ է այնտեղ՝ փոշոտ ճամպայում՝
 Զեռնում պինդ բըռնած ցուպը ճամբորդի.
 Այն ո՞վ է այնտեղ, շորս կողմն է դիտում...
 Մայած շորերով աղտոտ, սընտոի...:

Բ.

Նա կանգ է առնում, չէ կարող քայլել.
 Նա կանգ է առնում նեղ փողոցներում.
 Անմերի առաջ լըսում է երգեր,
 Վառ յիշատակներ գարթնում են սըրտում:
 Տեսնում է մայրեր պառաւ՝ ծերունի,
 Իրանց տուների չեմերի առջին
 Նըստած՝ հանում են ձայնը ջահարակի,
 Զայնը անուշիկ, այնպէս հեշտագին:
 Ան, այն ձայները յիշատակներ են.
 Ուռչում է սիրտը անբողոք պանդուխտին.
 Մի քանի կաթիլ այրուած աչերէն
 Մեղմ զըլուուելով դէպ՝ վար հոսեցին:
 Յիշատակներ են ամէնը, ամէն...
 Կեանքեր են, կեանքեր, օրեր թանկագին:
 Նա կանգ է առնում: Ահա գալիս են
 Զըբբեր աղջիկներ ժըպտուն, խնդագին:
 Մէկ, մէկ կուժ դըրած իրանց ուտերին՝
 Եարերի երգով խըրճիթ են դառնում.
 Աղբիւրների մօտ ջրերը լացեցին՝
 Տեսնելով նըրանց աչերը սիրուն:
 Երազոտ սարերում նոր բացուած տունկեր
 Է՛լ ամօթահար՝ դէպ՝ վար թեքուեցին.
 Ո՞վ ունի նըրանց նըման վառ այտեր,
 Ո՞վ ունի նըրանց պէս վարսեր նըբբին:
 Է՛լ չի դիմացաւ. կանգ առաւ այնտեղ.
 Մի քարի վըրայ նըստաւ արքամունակ.
 Ըսպասեց, մինչև հասան աղջիկներ.
 Զուր ուզեց նըանցից, ջուր, ջուր անուշակ:
 Քանի՞ տարիներ օտար երկըրում
 Այն անոյշ ջրին համը չէր տեսել.
 Քանի՞ տարիներ իր սըրտի ծալքում
 Կարօտը, կարօտն վառուել էր՝ այրուել:
 Կարօտը վա՛ռ վա՛ռ՝ իր հայրենիքին.
 Կարօտը իրա ծընողքին սիրուած.
 Կարօտը՝ հըզպարտ այն վե՛ն լեռներին.
 Կարօտը՝ ծաղիկոտ այն դաշտերին բաց:
 Խըմնեց անկըչում, մէկ կուժ ջուր խըմնեց...